



ՏԵՄՊՈՒՄ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ և ԻՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ATHENA

Ծրագրի նկարագրությունը



ATHENA ծրագրի նպատակն աջակցություն ցուցաբերել Եվրոպական հարևանության տարածքի երկրներից երեքի՝ Հայաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի բարձրագույն կրթական համակարգերի զարգացմանը, բարեփոխմանն ու արդիականացմանը: Այն կոչված էր իր նպաստը բերել բարձրագույն կրթությանն առնչվող համակարգային բարեփոխումների իրականացմանը և,

մասնավորապես, դրանց միտված ռազմավարությունների զարգացմանը: Դրանով իսկ ATHENA ծրագիրը հետապնդում էր նշված երկրների բարձրագույն կրթական համակարգերի կրթության որակի բարձրացման և հասցեականության ապահովման նպատակ՝ հեռանկարում ունենալով այդ համակարգերի առավել սահուն փոխազդեցությունը եվրոպական կրթական գործընթացների շրջանակներում:

Նշված նպատակներին հասնելու ճանապարհին ATHENA-ն իր առջև դրել էր հետևյալ խնդիրները.

- Լավագույն փորձի փոխանակման եղանակով նպաստել արդյունավետ կառավարմանը միտված բարեփոխումների իրագործմանը,
- Ծավալել բարձրագույն կրթական համակարգի կառավարման և ֆինանսավորման բարեփոխումների դիսկուրս՝ դրանում ներառելով բուհերը, պետական կառավարման մարմինները և բարձրագույն կրթության ոլորտի հնարավոր այլ շահառուների,
- Աջակցել համալսարաններին՝ ձեռքբերելու անհրաժեշտ կարողություններ՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտն արդիականացնելու համար:



Ծրագիրը համակարգում էր Եվրոպական համալսարանների ընկերակցությունը (ԵՀԸ-EUA), որը եվրոպական 47 երկրների բուհերի և ռեկտորների խորհուրդների ներկայացուցչական հաստատություն է: ԵՀԸ-ը բացառիկ դեր է խաղում Բոլոնյան գործընթացի մեջ, մասնավորապես, ներագդելով ԵՄ-ի կրթական, հետազոտական և նորարարական ռազմավարությունների ձևավորման վրա:

Ծրագրի հայաստանյան շահառուներն էին՝

- Երևանի պետական համալսարան, ծրագրի ազգային համակարգողը,
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
- Գավառի պետական համալսարան,
- Հայաստանի պետական բուհերի ռեկտորների խորհուրդ,
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Իրականացված գործունեության հիմնական ուղղությունները

ATHENA ծրագիրը, որ մեկնարկել էր 2012թ. հոկտեմբերին և ավարտվել 2016թ. հունվարին երեք հիմնական փուլեր է ունեցել:

- Առաջին տարում իրականացվում էր հետազոտությունը (ինչը ներառում էր համալսարանական ինքնավարության և ֆինանսավորման իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը ըստ նախագծի յուրաքանչյուր անդամ-երկրի), ինչպես և մեկնարկում նշված խնդրի շուրջ երկխոսությունը (մասնավորապես, ընդգրկուն աշխատաժողովի կազմակերպում, բարեփոխման ճանապարհային քարտեզի նախանշում):
- Երկրորդ տարին նվիրված էր ԵՄ գործընկեր համալսարանների փորձի փոխանակության միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև իրավիճակի վերլուծության զեկույցների նախնական մշակումներին:
- Երրորդ տարվա ընթացքում մշակվել և ավարտին է հասցվել ինքնավարության և ֆինանսավորման բարելավմանը միտված ճանապարհային քարտեզը, իրականացվել են անհրաժեշտ ու ծրագրած նյութերը:



Այսպես, ծրագրի առաջին տարում բոլոր երեք գործընկեր երկրներում կազմակերպվեցին համընդգրկուն աշխատաժողովներ, որտեղ մեկտեղվեցին բարձրագույն կրթության ոլորտի ամենատարբեր շահառուներ, ներառյալ



համալսարանական համայնքի և կառավարական շրջանակների ներկայացուցիչները՝ մտքեր փոխանակելու համալսարանական ինքնավարության առջև տվյալ երկրում ծառայած մարտահրավերների վերաբերյալ: Այս աշխատաժողովները հնարավորություն էին ընձեռում սկսել պետական մակարդակի երկխոսություն խնդրի շուրջ և ձևակերպել, նախանշել բարձրագույն կրթության կառավարման, ֆինանսավորման բարելավման ճանապարհային քարտեզի ուղենիշները: Մինչև աշխատաժողովները, ինչպես արդեն նշվեց, գործընկեր համալսարանները ներգրավված էին իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության գործընթացների մեջ:

Երկրորդ տարին նշանավորվեց լավագույն փորձի յուրացմանն ուղղված միջոցառումներով: 2014թ. ապրիլին Հելսինկիում /Ֆինլանդիա/ տեղի ունեցավ ֆինանսավորման մոդելների և կառուցակարգերի, ինչպես նաև համալսարանական ֆինանսական մենեջմենթի վերաբերյալ սեմինարը: Բարձրագույն կրթության կառավարման և ինքնավարության բարեփոխումների հարցերին նվիրված սեմինարը կայացավ Կոնիբրայում /Պորտուգալիա/ 2014թ. նոյեմբերին: Եվ վերջապես, մարդկային ռեսուրսների մենեջմենթի բարելավման հարցերին նվիրված սեմինարն էլ տեղի ունեցավ Ամստերդամում /Նիդերլանդներ/ 2015թ. փետրվարին:

Հատկանշական է, որ ողջ այս ընթացքում ԵՀԸ-ի և գործընկերերկրի հաստատությունների միջև ինտենսիվ գրագրություններ էին ընթանում բուհական ինքնավարության իրավիճակի վերաբերյալ ազգային զեկույցների տեքստերի կազմման և բարելավման գործողությունների ճանապարհային քարտեզների ձևավորման առնչությամբ:

Վերջիններս ավարտուն տեսքի բերվեցին երրորդ տարում: Տարվա ամենակարևոր միջոցառումը՝ համեմատական հենանշման ֆորումը /benchmarking forum/ հաջողությամբ կազմակերպվեց Երևանի պետական համալսարանում 2015թ. մայիսի ից 17-ը. հատկանշական է, որ այդ օրերին Հայաստանում ընթանում էր Բոլոնիայի նախարարական ֆորումը: Նախագծի ավարտին արդեն հրատարակվել էին բուհական ինքնավարության իրավիճակի վերաբերյալ ազգային զեկույցները, ինչպես նաև բուհական կառավարման, ֆինանսական մենեջմենթի և մարդկային ռեսուրսների կառավարման գործիքակազմ-նյութերը (հրատարակությունները հասանելի են <http://www.athena-tempus.eu/project/material> էլեկտրոնային կայքում):





ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Co-funded by the
Tempus Programme
of the European Union



ATHENA քրագրի պաշտոնական կայքը՝ <http://www.athena-tempus.eu/>

TEMPUS “*FOSTERING SUSTAINABLE AND AUTTONOMOUS HIGHER EDUCATION SYSTEMS IN THE EASTERN NEIGHBORING AREA*” ATHENA

Description & objectives



The ATHENA project aimed to contribute to the development, reform and modernization of higher education systems in the Eastern Neighboring partner countries Armenia, Moldova and Ukraine. As a structural measure, it is designed to support structural reform processes and the development of strategic frameworks at the national level. ATHENA ultimately aimed to enhance the quality and relevance of higher

education systems in the targeted partner countries and to increase their voluntary convergence with EU developments.

Based on an in-depth assessment of system-specific needs, ATHENA tried to:

- foster the transfer of good practices in order to promote efficient and effective governance and funding reforms;
- promote inclusive approaches to governance and funding reforms, involving higher education institutions, public authorities and other relevant higher education stakeholders;
- build the capacities of universities in the partner countries to modernise the management of financial and human resources.

The project coordinator was the European University Association (EUA) which is the representative organization of universities and national rectors' conferences in 47 European countries. EUA plays a crucial role in the Bologna Process and in influencing EU policies on higher education, research and innovation (for more on EUA, please visit its website:<http://www.eua.be/>).

The *Armenian partners* of the project were:

- Yerevan State University, the National coordinator of the project;
- National Polytechnic University of Armenia;
- Gavar State University;



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Co-funded by the
Tempus Programme
of the European Union



- State Universities Rectors Council of Armenia;
- Ministry of Education and Science of Armenia.

Activities

The ATHENA project, that launched in October 2012 and ended in January, 2016 was divided in three phases:

- First year: focus on research (data collection and analysis on the situation in university autonomy and funding in the partner countries) and on starting the policy dialogue around these issues (organisation of country workshops to discuss these topics, drafting of policy roadmaps).
- Second year: focus on capacity building for universities and policy dialogue between public authorities in ENPI East countries and EU countries (organisation of study visits, drafting of implementation roadmaps).
- Third year: focus on policy development and regional benchmarking exercise. Dissemination of project recommendations and policy roadmaps through a widely distributed publication.



So in the first year of the project national workshops were organized in each partner country. These were system-level events bringing together the main national higher education stakeholders, including university representatives and public authorities, to discuss the challenges of university autonomy and funding in the respective country. The workshops provided the opportunity to take stock of the state of play, kick-start a national policy dialogue and formulate concrete recommendations to promote governance, autonomy and funding reforms. Each workshop resulted in the development of concrete road maps for autonomy and funding reforms at national level. Prior to the workshops the Eastern Neighboring Area partners were engaged in a process of data collection.

The second year was full of events with capacity building. The seminar on funding models and schemes as well as on university financial management took place in Helsinki, Finland in April 2014. The seminar on governance and autonomy reforms was organized in Coimbra, Portugal in November 2014. And finally, the seminar on human resource management was held in



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Co-funded by the
Tempus Programme
of the European Union



Amsterdam, The Netherlands in February 2015. It is noteworthy that intense corresponding was in process between ENA partners and EUA on workout of country reports and policy roadmaps.

In the third year country reports and policy roadmaps were finalized and benchmarking activities implemented. The most important event – the benchmarking forum, was successfully organized in Yerevan State University in May 15-17, 2015. The year ended with production of the publications on HE autonomy situation country reports and policy roadmaps, as well as the toolkits HE governance



models, financial management and HR management (to see the publications, please visit <http://www.athena-tempus.eu/project/material>).

Website of the ATHENA project - <http://www.athena-tempus.eu/>